ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-22/06-3

գ.Լոռի Բերդ «09» սեպտեմբերի 2022 թ.

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավարի ժ/պ Էդուարդ Մելիքսեթյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սարգիս Հովսեփյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **2022թ. նոյեմբերի 30-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 50 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2/երկու/ օրինակ (հավելված N 3):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 4/չորս/ աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **16,188.000 (տասնվեց միլիոն հարյուր ութսունութ հազար)** ՀՀ դրամ, որից 2.698,000 (Երկու միլիոն վեց հարյուր հիսունութ հազար) ՀՀ դրամը՝ ԱՍՀ-ն: Գինը

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[311]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված

հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6/վեց/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Լոռի Բերդի համայնքապետարան **Լոռու մարզ, գ.Լոռի Բերդ,Աշոտ Երկաթի 7** **ՀՎՀՀ 06954163** **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** **ՀՀ 900252000907** **_____ Է.Մելիքեթյան** **Կ.Տ**	**«Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ** **ք.Վանաձոր, Ռուսթավի 7/12** **ՀՎՀՀ 06944032** **ՀՀ 1570021333510100** **Բանկ Ամերիաբանկ Վանաձոր Մ/Ճ** **----------Ս.Հովսեփյան** **Կ.Տ**

« » սեպտեմբերի 2022թ. կնքված
ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-22/06-3 ծածկագրով պայմանագրի

Ծավալաթերթ-Նախահաշիվ*

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում

N/N ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Քանակ	1 միավ. ընդ.արժ. հազ.դր.	Ընդհանուր արժեքը հազ. դր.
1	2	3	4	5	6
	Բացվածքի ամրացում				
1	D=800մմ պատի քանդում	մ³	2.3	15.96	36.71
2	Շին աղբի հավաքում և դուրս բերում՝ ձեռքով, բարձելով ինքնաթափին	տն	4.38	0.59	2.59
3	Տեղափոխում 3կմ	տն	4.38	1.51	6.61
4	Դռան բացվածքի ամրացում	տն	0.2582	289.75	74.81
5	Բետոն Վ - 15	մ³	0.13	42.48	5.52
6	Մետաղական անկյունակ 100*100*7մմ	մ	9.6	9.66	92.78
7	Մետաղական անկյունակ 50*50*4մմ	մ	1.5	2.18	3.28
8	Տաշտաձև հեծան 24մմ	մ	3.8	24.56	93.34
9	Մետաղաթերթ	տն	0.0236	1008.12	23.79
10	Ամրան Ա - 240C 8մմ	տն	0.0036	597.55	2.15
11	Ամրան A - 500c 12մմ(խարիսխ)	տն	0.006	670.72	4.02
12	Ամրան Ա - 500C 18մմ	տն	0.0096	670.72	6.44
13	Հեղույս M24	կգ	16.02	1.75	27.99
14	Անցքերի գայլիկոնում L=250մմ, d=16մմ	անցք	20	0.34	6.74
15	Մետաղական կոնստրուկցիա-ների փաթաթում "Ռաբիցա" տիպի ցանցով	100մ²	0.0694	153.70	10.67
16	Ցանցապատ հատվածների սվաղում g/ավազե շաղախով	100մ²	0.0694	333.05	23.11
17	Մետաղական կոնստրուկցիա-ների յուղաներկում (2 անգամ)	100մ²	0.0564	130.72	7.37
	Պատուհանի բացվածքի ամրացում				
1	D=400մմ պատի քանդում	մ³	0.87	15.96	13.88
2	Շին աղբի հավաքում և դուրս բերում՝ ձեռքով, բարձելով ինքնաթափին	տն	1.65	0.59	0.98
3	Տեղափոխում 3կմ	տն	1.65	1.51	2.49
4	Դռան բացվածքի ամրացում	տն	0.18704	289.75	54.19
5	Մետաղական անկյունակ 75*75*6մմ	մ	9	5.23	47.08
6	Մետաղական անկյունակ 50*50*4մմ	մ	0.7	2.18	1.53
7	Տաշտաձև հեծան 24մմ	մ	4.2	24.56	103.17
8	Մետաղաթերթ	տն	0.00918	1008.12	9.25
9	Ամրան A - 500c 12մմ(խարիսխ)	տն	0.0054	670.72	3.62
10	Հեղույս M24	կգ	7.5	1.75	13.10
11	Անցքերի գայլիկոնում L=250մմ, d=16մմ	անցք	18	0.34	6.07
12	Մետաղական կոնստրուկցիա-ների փաթաթում "Ռաբիցա" տիպի ցանցով	100մ²	0.0462	153.70	7.10
13	Ցանցապատ հատվածների սվաղում g/ավազե շաղախով	100մ²	0.0462	333.05	15.39
14	Մետաղական կոնստրուկցիա-ների յուղաներկում (2 անգամ)	100մ²	0.0282	130.72	3.69

	վերափոխում				
1	D=400մմ պատի քանդում	մ³	0.52	15.96	8.30
2	Շին աղբի հավաքում և դուրս բերում՝ ձեռքով, բարձելով ինքնաթափին	տն	0.99	0.59	0.59
3	Տեղափոխում 3կմ	տն	0.99	1.51	1.49
4	Դռան բացվածքի ամրացում	տն	0.1206	289.75	34.94
5	Բետոն Վ - 15	մ³	0.084	42.48	3.57
6	Մետաղական անկյունակ 75*75*6մմ	մ	12.8	5.23	66.97
7	Մետաղական անկյունակ 50*50*4մմ	մ	0.7	2.18	1.53
8	Մետաղաթերթ	տն	0.01224	1008.12	12.34
9	Ամրան Ա - 240C 8մմ	տն	0.0024	597.55	1.43
10	Ամրան A - 500c 12մմ(խարիսխ)	տն	0.0072	670.72	4.83
11	Ամրան Ա - 500C 18մմ	տն	0.0084	670.72	5.63
12	Անցքերի գայլիկոնում L=250մմ, d=16մմ	անցք	24	0.34	8.09
13	Մետաղական կոնստրուկցիա-ների փաթաթում "Ռաբիցա" տիպի ցանցով	100մ²	0.0448	153.70	6.89
14	Ցանցապատ հատվածների սվաղում ց/ավազե շաղախով	100մ²	0.0448	333.05	14.92
15	Մետաղական կոնստրուկցիա-ների յուղաներկում (2 անգամ)	100մ²	0.0256	130.72	3.35
	Տանիք				
1	Տանիքի ասբոշիֆերի քանդում կավարամածով	100մ²	4.80	26.36	126.55
2	Շին աղբի հավաքում և դուրս բերում՝ ձեռքով, բարձելով ինքնաթափին	տն	5.76	0.59	3.40
3	Տեղափոխում 3կմ	տն	5.76	1.51	8.69
4	Տանիքի վնասված փայտանյութի փոխարինում	մ³	0.5	252.74	126.37
5	Չորսու կավարամածի 60*50մմ	մ³	3.63	185.97	675.08
6	Տանիքի իրականացում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից, КП-21 0.55մմ	100մ²	4.83	707.55	3417.45
7	Ճակտոնի երեսպատում ցինկապատ թիթեղով	100մ²	0.085	713.64	60.66
8	Պիպի կառուցում ցինկապատ թիթեղից՝ տախտակամածով	100մ²	0.144	713.64	102.76
9	Պիպի տախտակ 50*150մմ	մ³	0.72	185.97	133.90
10	Ձեղնալուսամուտների տեղադրում	հատ	1	30.87	30.87
11	Փայտանյութի մշակում հականեխիչ և հակահրդեհային լուծույթով	մ³	14.5	13.95	202.25
12	Կավարամածի մշակում հականեխիչ և հակահրդեհային լուծույթով	100մ²	4.83	45.16	218.10
13	Ինքնաշաղափող հեղույս	հատ	2898	0.02	63.61
	Միջնորմներ				
1	Միջնորմների քանդում	մ³	9.88	24.85	245.56
2	Շին աղբի հավաքում և դուրս բերում՝ ձեռքով, բարձելով ինքնաթափին	տն	18.77	0.59	11.09
3	Տեղափոխում 3կմ	տն	18.77	1.51	28.33
4	Միջնորմների շարում 100մմ հաստ. բետոնե թեթև բլոկներից, կողային հատվածները լցնել էլաստիկ նյութով	մ³	7.44	38.20	284.18
5	Դռան բացվածքի փակում 200մմ հաստ. բետոնե թեթև բլոկներից, կողային հատվածները լցնել	մ³	2.07	31.70	65.63

6	Կառուցվող թեթև բետոնե բլոկների անցքերի լցնում թեթև Վ-7.5 դասի բետոնով	մ³	2.14	37.75	80.78
7	Միջնորմների ամրանավորում ամրան A-240c դասի ամրանով	տն	0.14626	597.55	87.40
8	Ե/բ միաձույլ բարավորի կառուցում Վ-15 դասի բետոնից	մ³	0.126	92.68	11.68
9	Ամրան Ա - 240C 6մմ	տն	0.00412	597.55	2.46
10	Ամրան Ա - 500C 12մմ	տն	0.00551	670.72	3.70
11	Միաձույլ ե/բ գոտու կառուցում Վ - 15 դասի բետոնից	մ³	0.056	73.15	4.10
12	Ամրան Ա - 240C 6մմ	տն	0.00174	597.55	1.04
13	Ամրան Ա - 500C 12մմ	տն	0.00249	670.72	1.67
14	Միաձույլ ե/բ երիզվածքի կառուցում Վ - 15 դասի բետոնից	մ³	0.138	103.54	14.29
15	Ամրան A - 240c 6մմ	տն	0.00238	597.55	1.42
16	Ամրան A - 500c 12մմ	տն	0.01014	670.72	6.80
	Բացվածքներ				
1	Փայտե դռների քանդում	100մ²	0.45	155.35	69.91
2	Փայտե պատուհանների քանդում	100մ²	0.274	263.27	72.14
3	Մետաղական ճաղաշարերի ապամոնտաժում (10 հատ)	100մ	0.67	60.59	40.35
4	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում (բացվող), երկշերտ ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ (60մմ հաստ.)	մ²	16.1745	34.65	560.47
5	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում (չբացվող), երկշերտ ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ (60մմ հաստ.)	մ²	15.5145	23.46	363.91
6	Ալյումինե վիտրաժների (դուռ) տեղադրում թերմոկամուրջով, (բացվող), երկշերտ ապակեփաթեթով 4+4մմ (60մմ հաստ.)	մ²	2.1	122.61	257.49
7	Ալյումինե վիտրաժների տեղադրում թերմոկամուրջով, (չբացվող), երկշերտ ապակեփաթեթով 4+4մմ (60մմ հաստ.)	մ²	8.4	112.17	942.23
8	Մետաղապլաստե դռների տեղադրում, հայկական արտադրություն, երկշերտ ապակեփաթեթ 4+4մմ, (6սմ հաստ.)	մ²	2.1	47.27	99.26
9	Մետաղապլաստե դռների տեղադրում, հայկական արտադրություն, (6սմ հաստ.)	մ²	31.545	47.27	1491.08
10	Ալյումինե դռների տեղադրում թերմոկամուրջով, վերնափողկով, 4+4մմ ապակեփաթեթ (60մմ հաստ.)	մ²	9.885	122.40	1209.95
11	Պատուհանագոգերի տեղադրում (առանց նյութի արժեքի)	մ²	8.48	3.83	32.47
12	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 400մմ լայն.	գծմ	21.2	6.27	132.91
	Սալվածք				
1	Գոյություն ունեցող բետոնե սալվածքի քանդում	մ³	7.0	21.24	148.71
2	Շին աղբի հավաքում և դուրս բերում՝ ձեռքով, ոչ ոչնչացնող ինքնաթափին	տն	12.6	0.59	7.45

3	Տեղափոխում 3կմ	տն	12.6	1.51	19.02
4	Բնահողի տոփանում խճով	100մ^2	1.16	37.63	43.65
5	Խճի նախաշերտի իրականացում 100մմ հաստ.	մ^3	11.6	15.19	176.15
6	Ց/ա հարթեցուցիչ շերտի կառուցում 30մմ հաստ.	100մ^2	1.160	170.48	197.76
7	Ամրանավորված բետոնե նախաշերտ 100մմ հաստ., Վ-12.5 դասի բետոնից	մ^3	11.6	44.84	520.12
8	Ցանց Вр 100*100*4մմ	մ^2	116.0	1.73	200.82
	ընդամենը				13490,00
	20 % ԱԱՀ				2698,00
	ԸՆԴԱՄԵՆԸ				16188,00

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ **ԿԱՊԱԼԱՌՈՒ**

_____ **Է.Մելիքեթյան** ---------- **Ա.Հովսեփյան**

Կ.Տ **Կ.Տ**

Հավելված թիվ 2
« 05 » սեպտեմբերի 2022թ. կնքված
ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-22/06-3 *ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
5	Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրի մանկապարտեզի շենքի հիմնանորոգման աշխատանքների համար նախատեսված ֆինանսական միջոցների /արժեքի 30%/ մասով	Պայմամագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	30.11.2022
6	Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրի մանկապարտեզի շենքի հիմնանորոգման աշխատանքների մնացած մասով	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	30.11.2022
ԸՆԴԱՄԵՆԸ			30.11.2022

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Լոռի Բերդի համայնքապետարան
Լոռու մարզ, գ.Լոռի Բերդ,Աշոտ Երկաթի 7
ՀՎՀՀ 06954163
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ 900252000907

_____ Է.Մելիքեթյան

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Վանյան և Հովսեփյան>> ՍՊԸ
Ք. Վանաձոր, Ռուսթավի 7/12
Բանկ՝ Ամերիաբանկ Վանաձոր Մ/Ճ
Հ/Հ ՀՀ 1570021333510100
ՀՎՀՀ 06944032

---------- Ս.Հովսեփյան

Կ.Տ

Հավելված N 3
« 03 » սեպտեմբերի 2022թ. կնքված
ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-22/06-3 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	45611100/2	Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրի մանկապարտեզի շենքի հիմնանորոգման աշխատանքներ	0	0	0	0	0	0	0	0	4.865.400	4.865.400	4.865.400	4.865.400	4.865.400

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ կկազմվի նոր ժամանակացույց ամբողջ գումարի չափով՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Լոռի Բերդի համայնքապետարան
Լոռու մարզ, գ.Լոռի Բերդ,Աշոտ Երկաթի 7
ՀՎՀՀ 06954163
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ 900252000907

Է.Մելիքեթյան

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Վանյան և Հովսեփյան>> ՍՊԸ
Ք. Վանաձոր, Ռուսթավի 7/12
Բանկ՝ Ամերիաբանկ Վանաձոր Մ/Ճ
Հ/Հ ՀՀ 1570021333510100
ՀՎՀՀ 06944032

Ս.Հովսեփյան

Կ.Տ